

ԳԱՆՆԱԶԱՄԱՐ

ՄԱՅԻՍ Գ. 2012

نشرة مطرانية الأرمن الأرثوذكس

ՌՈՒՍԻԱ ԵՄ ՍՈՒՐԻՅԱ ԶԱՐԴԱԿՈՒՄՆԵՐՈՒՆ ԵՏԻՆ «ՔԱՅԻՏԱ»Ի ԴԱՇՆԱԿԻՅՆԵՐ ԿԸ ՏԵՍԵԷ

Սուրիոյ նախագահ Պաշար Ասատ Կիրակի, 13 Մայիսին 7 անդամներէ բաղկացած Սահմանադրական դատարան մը ստեղծելու հրամանագիր մը հրապարակեց:



Սուրիոյ Ընտրական կեդրոնական յանձնախումբը Երեքշաբթի, 15 Մայիսին հրապարակեց իր որոշումը՝ որով հրապարակական ընտրութեան վերջնական արդիւնքները, ըստ որոնց, ընտրութեան մասնակցութեան համեմատութիւնը 51.26 առ հարիւր էր եւ յաղթանակ արձանագրած երեսփոխանական թեկնածուներու շարքին եւ 30 կիներ:



Միւս կողմէ, Ռուսիոյ արտաքին գործոց փոխնախարար Կենատի Կաթիլով յայտնեց, որ Սուրիոյ մէջ տեղի ունեցած վերջին յարձակումներուն ետին «Քայիտա»-ի դաշնակից ահաբեկչական խմբաւորումներ կը կանգնին: Ան նշեց, որ հաստատ տեղեկութիւններ գոյութիւն ունին այն մասին, թէ զինեալներու շարքին լիպիացի եւ արաբական այլ երկիրներէ վարձկաններ կան: Ան աւելցուց, թէ ՄԱԿ-ի եւ Արաբական Լիկայի Սուրիոյ հարցով յատուկ պատուիրակ Քոֆի Անանի ծրագրի յաջողութեան համար տակաւին ամիս կայ՝ շեշտելով, որ Ռուսիա իր կարելի պիտի ընէ այդ ծրագրի ձախողութիւնը կանխարգիլելու համար:

Իրանի արտաքին գործոց նախարար Ալի Աքպար Սալեհի վերահաստատեց, որ Իրան սուրիական ներքին հարցին մէջ արտաքին որեւէ միջամտութեան դէմ է, մինչ Սուրիոյ մօտ Իրանի նախկին դեսպան՝ ներկայիս Իրանի խորհրդարանի նախագահի խորհրդական Զուսէյն Շէյխուլիսլամ, քննադատեց Սուրիոյ հարցով Թուրքիոյ վարած քաղաքականութիւնը: Շէյխուլիսլամ յայտարարեց, որ Թուրքիան կը շարունակէ իր շահերուն համար օգտագործել Սուրիոյ մէջ տիրող իրադրութիւնը: «Թուրքիան Սեուտական Արաբիոյ, Զաթարի, Ամերիկայի եւ Իսրայէլի հետ միատեղ, բոլոր ամիսները կը փորձէ շահագործել, Սուրիոյ մէջ յեղաշրջում իրականացնելու համար», ըսաւ ան:

ԻՐԱՆԻ ԱԶԵՐԻՆԵՐԸ ԱՆՋԱՏՈՐԱԿԱՆ ՇԱՐՇՈՒՄ ԿԸ ԱՍԵՂՏԵՆ ԹՈՒՐԻՅՈՅ ՄԵՋ

Թրքական «Չաման» թերթը կը հաղորդէ, թէ Իրան ապրող ատրպէյճանցի թուրքերը Թուրքիոյ մէջ հաստատած են «Յարաւային Ատրպէյճանի թուրքերու ազգային խորհուրդ»ը, որուն գլխաւոր նպատակն է Իրանի Յարաւային Ատրպէյճանի նահանգին համար անկախութիւն ապահովել:

Երկուշաբթի, Մայիս 14-ին տրուած մամուլի ասուլիսի մը ընթացքին, խորհուրդի բանբեր Ճեմալ Մեմետանօղլու յայտարարած է, թէ կազմակերպութիւնը կը փափաքի «Ժողովրդավարական եւ խաղաղ» միջոցներով, այլ ոչ զէնքի ուժով, իրագործել Իրանէն անջատուելու նպատակը: Ան միաժամանակ պնդեց, թէ Իրանէն անջատուելու իրենց ծրագիրը ոչ մէկ կապ ունի Իրանի դէմ Միացեալ Նահանգներու կամ Իսրայէլի ծրագիրներուն հետ:



Բանբերը շեշտեց, թէ Իրանի մէջ կ'ապրին թրքական ծագումով 35 միլիոն թուրքեր, եւ այդ իսկ պատճառով, եթէ Միացեալ Նահանգները Իրանի մէջ ծրագիրներ իրագործելու նպատակներ ունի, ապա պետք է խորհրդակցի ոչ միայն Թուրքիոյ եւ Ատրպէյճանի հետ, այլեւ՝ Իրանի ատրպէյճանցիներուն հետ:

ԴԱՏԱԴՐՆԱԳԻՐ

Յալէպի Զրիստոնեայ Յամայնքապետերու բումն կերպով կը դատապարտենք Սուրիական հայրենիքի տարածքին շարունակուող ոճրային բռնարարները, որոնց վայրագ արտայայտութիւններէն էին Դամասկոսի վերջին երկու անգամ յայտնուող, Յալէպի գա-



նազան մարդաշատ թաղամասերու մէջ զետեղուած ականները եւ ապահովական ծառայութեանց արթնութեամբ խափանուած ականահարման փորձերը:

Սուրիոյ անդորրութիւնը եւ ժողովուրդը թիրախ ընտրած արտաքին ուժերու ներքին գործակիցներու ձեռքբերով ի գործ դրուած այս ոճրարարներուն արդիւնք նահատակուած հարիւրաւոր քաղաքացիներու եւ ապահովական ու զինուորական համակարգի նուիրեալներու հոգիներուն համար կ'աղօթենք ու կը խոնարհենք մեր գլուխները յարգանքով:

Սուրիացիի ազնիւ արեան հեղուած իւրաքանչիւր կաթիլ կ'արմատացնէ մեր մէջ հայրենիքի սերը ու անոր պահպանութեան ու ծաղկումին սատարելու յանձնառութիւնը:

Ազգային ու քաղաքացիական միասնականութեամբ եւ խրոխտ սուրիացիի վճռակամութեամբ պողպատացած սուրիական պատուէշին վրայ պիտի խորտակուին բոլոր դաւադիր ու նենգ արարքները:

Յալէպի Զրիստոնեայ
Յամայնքապետեր

Յալէպ, 12 Մայիս 2012

ՀԱՊԿ-Ն ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԵՋ ՈՐԴԵՂՐԱԾ Է ՄԻԱՃԵԱԼ ՀՈՉԱԿԱԳԻՐ

Նախագահ Սերժ Սարգսեան 15 Մայիսին Ռուսիոյ մայրաքաղաք Մոսկուայի մէջ մասնակցած է Հաւաքական անվտանգութեան պայմանագրի

կազմակերպութեան (ՀԱՊԿ) խորհուրդի յոբելեանական նիստին, որ նուիրուած է Հաւաքական անվտանգութեան վերաբերող պայմանագրի ստորագրութեան 20-ամեակին եւ ՀԱՊԿ-ի ստեղծման 10-ամեակին:



ՀԱՊԿ Հաւաքական անվտանգութեան խորհուրդի նիստին ընթացքին կազմակերպութեան անդամ երկիրներու ղեկավարները անդրադարձած են միջազգային արդի խընդիրներուն, համաշխարհային ու տարածաշրջանային մարտահրաւերներուն, ինչպէս նաեւ կազմակերպութեան անդամ պետութիւններու անվտանգութեան սպառնալիքներուն հակազդելու յետագայ միացեալ քայլերուն: Զննարկուած են նախորդ տասը տարիներուն ընթացքին կազմակերպութեան տարած գործունեութեան հիմնական արդիւնքները:

Նիստի աւարտին որդեգրուած է միացեալ հռչակագիր, ուր միջազգային իրավիճակի զարգացման հիմնական ուղղութիւններուն եւ ՀԱՊԿ-ի գործունեութեան արժեւորումը կատարուած է: